Արձանագրություն N 2

«ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Կոմիտաս 49/4 **«04» «12» 2023թ**
ժ.14:00

Նիստին ներկա էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տիգրան Քալաշյան (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Արսեն Ենգիբարյան(ԳՊ/ԳԱ),
Սարգիս Ալոյան (ԳՊ/ԳԱ) , Արթուր Մարտիրոսյան (ԳՊ/ԲԱ), Անահիտ Ավետիսյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Աննա Ներսիսյան

1. Տեղեկություններ «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/1» ծածկագրով գնանշման հարցման հայտեր ներկայացրած մասնակիցներ մասին

(Տ.Քալաշյան)

Ընդունել ի գիտություն, որ հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերը հրապարակելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 14:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

2023թ-ի դեկտեմբերի 04-ից մինչև 07-ը , «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ -ում՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 49/4 հասցեում, տեղի ունեցավ « **ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/1**» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը:

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կարիքների համար « **ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/1**» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

1	«Մաքս Օիլ» ՍՊԸ	ՀՎՀՀ 02662703 էլ. Փոստ maxoil.llc@mail.ru
2	«ՖԼԵՇ» ՍՊԸ	ՀՎՀՀ 01808789 էլ. Փոստ flashltdtender@gmail.com

2. Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Տ.Քալաշյան)

2.1 Հրավերով սահմանված՝ Հավելված 1-ը, Հավելված 1.1-ը, Հավելված 1.3-ը և Հավելված 2-ը «Մաքս Օիլ» ՍՊԸ –ի և «ՖԼԵՇ» ՍՊԸ –ի կողմից ներկայացված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան.

2.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց «Մաքս Օիլ» ՍՊԸ –ի և «ՖԼԵՇ» ՍՊԸ –ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

- **Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

3. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Տ.Քալաշյան)

Չափաբաժին	Անվանումը	Ֆինանսական միջոցներով նախատեսվող գնման հայտի գին	«Մաքս Օիլ» ՍՊԸ		«ՖԼԵՇ» ՍՊԸ	
			Ինքնարժեք	Ընդհանուր գինը	Ինքնարժեք	Ընդհանուր գինը
1	Բենզին ռեգուլյար	15 900 000	13 125000	15 750 000	13 000 000	15 600 000

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ

- **Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

3.2 Հանձնաժողովը որոշեց «ՖԼԵԾ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և հրավերի պահանջներին համապատասխանող:

- **Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:**

3.3 Հանձնաժողովը որոշեց « ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել « ՖԼԵԾ» ՍՊԸ –ին:

- **Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0**

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ.Քալաշյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.3-րդ կետով ընդունված որոշումը ինչպես նաև "Գնումների մասին" ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-24/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել **«ՖԼԵԾ» ՍՊԸ –ին:**

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ կկնքվի պայմանագիր որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու դեպքում:

- **Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0**

Հանձնաժողովի		
Անդամներ՝		Տ.Քալաշյան
		Ա.Ենգիբարյան
		Ս.Ալոյան
		Ա.Մարտիրոսյան
		Ա.Ավետիսյան
Քարտուղար՝		Ա.Ներսիսյան